

թիւն է գարձել համալսարաններում կամ մասնաւոր կերպով միսիոնարութեան մասին դասընթացքեր կարգավէ: Այդպիսի դասախոսութիւնների մասնակցում են պատառներ, ուսուցիչներ, աստուածաբանութեան հանդիտաներ (աւարտած) և ուսանողներ և ընդհանրապէս այնպիսի մարդիկ, որոնց սրտին կամ մօտ է քրիստոնեութեան տարածման դործը կամ ցանկութիւն ունին գործնականապէս ծառայել այդ նպատակին: Այդպիսի մի դասընթացք որշուած է բանալ եկող մայիսին Լայպցիգին մօտ եղած Լաուզիգ քաղաքում: Լայպցիգի միսիոներական ընկերութիւնը խոսանում է բնակարանի և կերակրի կողմից ամեն տեսակ զիւրութիւններ տալ դասընթացքին մասնակցող անձանց:

— Անցեալ տարուայ ընթացքում Այիննայի բողոքական համայնքը ստուարացել է 1107 նորագործներով: Օրուցից 937 կաթոլիկ են եղել և 170 հոդի հրեայ, Յամենայն գէպս Աւստրիայում սկըսուած հակակաթոլիկական շարժուամբ հետզհետէ կարծես թուլանում է:


— Ներկայ թուականից՝ Այիննայի բողոքական ստուածարանական փակուլտետը մի մի մեծ դիւրութիւն պիտի ստանայ ստուածարաններ պատրաստելու գործի նկատմամբ: Ավազուց արծարծւում էր ստուածարանութեան ուսանողների համար առանձին բնակարան ունենալու միտքը: Բուն Գերմանիայում համալսարանական քաղաքներում շատ կան այնպիսի հաստատութիւններ, որոնց նպատակն է ստուածարանութեան ուսանողներին ներթագէս և բարոյապէս նպաստելու հիմնաւոր կրթութիւն և դիտուական պատրաստութիւն ձեռք բերելու համար: Այդ հաստատութիւնները յայտնի են զանազան Convent, Theologenheim անուններով: ուր ստուածարանութեան ուսանողները ձրի բնակարան և վառելիք են ստանում: մի տեսակ համայնական ուսանողական կեանք են վարում այն ուսուցչապետի առաջնորդութեամբ: Օրին յանձնուած է հաստատութիւնը: Ուսանողներն իրեց շուրամական գիտական ժողովներն ունին ուսուցչապետի նախագահութեամբ: Կարգով շաբարդութիւններ են կարդում և քննադատութեան ննջարկում: կամ քարոզներ են խօսում և այսպիսով գործնականապէս քարժուում ապագայ քահանայաշական պաշտօնի համար: Այդպիսի հաստատութիւնների իրենց մասնաւոր մատենադարաններն ունին որից օգուտել կարող են ուսանողները: Ան հաստատութիւններ են, ուր վերցիշեալների հետ նաև համայնական ծաշ ունին բոլորուն ձրի կամ չնչին վճարով:

Ահա այսպիսի մի հաստատութիւն է հիմնը ուր այս տարաւանից բողոքական ստուածարանութեան փակուլտետի հսկողութեան ներքոյ՝ արժանաւոր հոգեորականներ պատրաստելու համար հակամայուիկ շարժմամբ: վերջին տարիներս բոլո-

քականութիւնն ակսել է դրանալ Աւստրիայում և մեծ կարիք է զգացւում պատրաստուած պատուը ների. նոր հաստատութիւնն անշուշտ շատ նպաստաւոր կլինի այս կարիքը լրացնելու համար:

Բողոքական և կաթոլիկ եկեղեցիների օրինակին հիմնեւմ է այդպիսի բարինպատակ ձեռնարկութիւնների մէջ նաև Խուսաց եկեղեցին: սեմինարիստներին օգնող ընկերութիւններ և ընծայարանները հիմնելով: «Ընծայարան» կարելի է կոչել այն հաստատութիւնները, ուր կաթոլիկ օրինոգուք և բողոքական եկեղեցիների համար սպասաւորներ են պատրաստուած: գործնականապէս վարժեցնելով մանակցողներին եկեղեցական պաշտամունքի և քարոզութեան մէջ, Այդպիսի «Ընծայարանները սաներ ընդունուած են միջնակարգ և բարձրագոյն հոգեառ դպրոցներն աւարտած երթաւա-

սարդներից: Մենք ևս պարտաւոր ենք օրինակ վերցնելու մեր հանգամանկների համեմատ: առանց կոչման պատրաստ սպասաւորներն եկեղեցին անզօր կինի իւր դաստիարակչական նպատակին ծառայելու և Աւետարանը մեռած տառ կմնայ մեր ժողովրդի համար:



## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

### ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ.

Ա.

**Պ**իծնիթիին և Եկեղեցին վերնագրավ մի յօդուածի մէջ «Արարատ»-ի ընթերցողներին փորձել ենք պարզել այն խնդիրը, որ տարարազդաբարդ գետ շատերի համար վիճելի է, թէ գիտութիւնը, յատկանքէն եկեղեցական կամ տատուածաբանական դիտութիւնը, ինչպէս ընդհանուր, այնպէս էլ մէր եկեղեցու զարդ այցան, բարյալին հեղինակութեան բարձրացման անհրաժեշտ պայմաններից մէկն է: Տգիտութիւնը, մոքերի շփոթութիւնը, քրիստոնեական լուսուոր զարգափարների բացակայութիւնը մէկ եկեղեցու համար նոյնչափ

վասնդաւոր են ներկոյում, ինչպէս Պարսկց Արարաների, Մանզոլների և Աելջուկների վայրենի հարած անգներն անցեալում: Մայր Աթոռը վարչութեան կեղրոն լինելուց զատ՝ պէսք է գիտնական հեղինակութիւն զառնոյ ամբողջ հայ ժողովրդի աշխաւմ, այս էր մեր յօդուածի էական իմաստը ներկայիւս մեր ընթերցողների և բանիմաց հասարակութեան ուշագրամիւնն ենք հրաւիրում մի ուրիշ կարեսը հարցի վերայ, որ շատ սերտ առնչութիւն ունի վերցիշեալի հետ: Մեր խօսքը վերտրերում է այն խնդրին, թէ անհրաժեշտ է Մայր Աթոռի մատենադարանը նվազանել եւ կնորոնական հայտիւտական, լիակատար մասնենադարսն կազմէլ:

Գիտութեան բարդ աւաճման համար կառուց հաստատութիւն է մատենադարանը: Առանց մատենադարանի ոչ միայն գիտութիւն, այլ և ընդհանրապէս մարդկային հոգեու կեանքի անգրնատ զարգացում լինել չէ կարող: Անցեալ սերնդի մաքի արգիւնքը անօպուտ և մեռած գանձ կիննէր մեր համար, եթէ հնարաւորութիւն չունենայինք օգտաւելու նորա մոքերը բավանդակաղ դըրքերից: Տպագրութեան արուեստի հիմնադիրը մարդկութեան ամենամեծ բարերարների կարգն է անցել այն սպատճառով, որ միջոց է զանել համեմատաբար էժան զնով մատչելի գարձնել ընդհանրութեան անհատների մոքի արգիւնքը: Բայց գժուարութիւնները զորանով չեն վերանում: Ծննթերցազ հասարակութիւնից շատ քիչ տուկո հնարաւորութիւն ունի ձեռք բերելու նոյն իսկ իւր սիրած ամենակարեւոր գրքերը Այս գժուարութիւնը վերցինելու համար են հաստատում հասարակաց ընթերցարանները, մատենադարանները, ընթերցուղը մի չնյին տուրք վճարելով իրաւունք է ստանում ընթերցանութեան համար օգտակարութեան: Հարփիրաւոր պարբերական թերթերից և հաղարաւոր գրքերից: Քաղաքակիրթ աղքերի մէջ հասարակաց կամ ժողովրդական մատենադարանները նայնափառ հասարաւութիւններ են համարւում, ինչպէս գաղրացները մեր քաղաքակիրթութեան պատվարը շատ գժուարութեամբ կամ շատ չափով կարելի է մատենադարանների հասարական մատենադարանների իւր ընթերցանութեան յագուրդ տալ, ինչպէս առանց հասարակաց մատենադարանների հոգեալ քաղաքակիրթութեան պատվարը շատ գժուարութեամբ կամ շատ չափով կարելի է մատենադարանների հասարական մատենադարանների այնպէս էլ առանց գիտնական մատենադարանի ցնորք է երազել գիտութեան բարգաւաճման մասին: Թուղ հարփիրաւոր մարդիկ պատրաստուած լինին գիտութեամբ զբացուելու, առանց մատենադարանի անընդունակ կիրենին իրենց նախապատրաստութեան համապատասխան արգիւնք տալ: Գիտութեան զարգացումը և մատենադարանների ծագումը երկու ամենասերտ առնչութեամբ կապուած զաղափարներ են: Կրած է գիտնականը առանց մատենադարանի, մեռած, անօպուտ գանձ է մատենադարանն առանց գիտնական աշխատաւորների: Բայց մատենադարանի գյուտթիւնն ինքնըստինը եան խթան է գառնում գիտութեան մասին փոքր ի շատէ զաղափար սննեցող մարդկանց զբացուելու և իրենց մոտաւոր կարողութիւննը արգիւնաւորելու ընդհանրութեան համար: Այս ժողովուրդը, որ գեռ ևս մատենադարան չունի գիտութեան սպահանչների համեմատ, որ գեռ ևս այն գիտակցութեան չէ հասել, թէ մատենադարանը աղքային ամենակարեւոր հաստատութիւններից մէկն է, որի համար ոչ մի չափ և զոհաբերութիւն չպէտք է ինսցել, իրաւունք չունի քաղաքակարթութեան անունով խօսելու: Աղքերի հաստատութեան լոււաղոյն նշանը աղքային մատենադարանի և թանգարանի գյուտթիւնն է: Հոգեալ կեանքով վերածնուող աղքերի պատմութիւննը պարզ կերպով ցոյց է տալիս մեզ այս իրողութիւնը: Նախնեաց թողած քաղաքակիրթութեան մնացորդներն ու հնութիւնները հաւաքելուն հետհաւում է անցեալի և ներկայի ուսումնասիրութիւնը, իսկ այս ամենի արգիւնքը հոգեալ նոր կեանք, նոր քաղաքակիրթութիւնն է:

Բայց մեր խօսքը գիտնական մատենադարանի մասին է, որ շատ աւելի մեծ զուղութիւններ է պահանջում: Ինչպէս հասարաւորութիւն չունի առանց հանրական մատենադարանների իւր ընթերցանութեան յագուրդ տալ, ինչպէս առանց հասարակաց մատենադարանների հոգեալ քաղաքակիրթութեան պատվարը շատ գժուարութեամբ կամ շատ չափով կարելի է մատենադարանների հասարական մատենադարանների հոգեալ քաղաքակիրթութեան պատվարը կամ շատ չափով կարելի է մատենադարանների հասարական մատենադարանների այնպէս էլ առանց գիտնական մատենադարանի ցնորք է երազել գիտութեան բարգաւաճման մասին: Թուղ հարփիրաւոր մարդիկ պատրդիկ պատրաստուած լինին գիտութեամբ զբացուելու, առանց մատենադարանի անընդունակ կազմէլ:

Բ.

Բայց ոչ միայն հոգեսոր նոր կեանը բավ վերածնուող, այլ եւրոպական բարոր ազգերին յասուկ է այս երեսոյթը։ Օտարաբականը մնում է զարմացած, ահանելով եւրոպական ազգերի դործ դրած նիւթական և բարոյական զսոզութիւնների արուեստի, հնութեանց թանգարանների և մատենագարանների համար։ Մի քանի տեղեկութիւններ, որ մնեք քաղել ենք դիտնական թերթերից, այլ և այլ պետութիւնների ազգային մատենագարանների մասին, բաւական են սպարզելու այդ տեսակի հաստատութիւնների գնահատութիւնը քաղաքակիրթ ազգերի կողմից։ Աշխարհին ամենանշանաւոր մատենագարանը, եթէ չենք սխալում, ըրբանական թանգարանն է։ Բազմաթիւ գիտնականներ մատենագարանավատի պաշտօն են կատարում ձեռքի տակ ունենալով համալսարանաւարա օգնականներ, որոնք կարդաւում են տպագրուած դրքերն ու ձեռագիրները, դիտութեան պապահանների համեմատ ցուցակներ և պատրաստում և ընդհանրապէս ամեն տեսակ դիւրութիւններ սաեղջում գիտութեամբ զարգաւուզների համար։ Մատենագարանի գիտնական ցուցակը, որի պատրաստութեան համար աշխատել է հաստատութեան ամբողջ կազմը, տպագրուում է 1880 թուից և միայն այս տարի է վերջացել։ Ամբողջ ցուցակը կազմուած է 800 մեծ հատորներից, այն ինչ առաջ ձեռագիր ցուցակները 2000—3000 հատորից են բազկացած։ Երբանական մատենագարանը ընդհանուոր մարդկային մորքի արտադրութեան թանգարանի կարելի է անուանել, որտեղին ոյնտեղ հաւաքուած են ոչ միայն նոր լեզուներով հրատարակուած բարոր դրքերը, այլ և ամենահին ազգերին եղի խաբացիների, Անոքրեստացիների, Բարելացիների հնաթիւններն ու աղիսէ մատենագարանները, յունական, լատինական, տարական, Հայոց և միու ազգերի ձեռագիրներն ու պապաւորուսի մատցորդները, Հնաց միայն ուսուրական ձեռագիրների թիւը 1200-ի է համաւմ, Այս հաստ-

տութեան մասին բնիմերցազնկրին կարճ դասպահար աւալու համար կատենը, որ տարեկան միջին թուով 100000 դիրք և 25000 պարբերական թերթ է ստացւում։ Ոչ պակաս նշանաւոր է Փարիզի ազգային մատենագարանը, որի ձեռագիրների բազմահատոր ցուցակը ապնում է 1895 թուից Հնաց միայն յունարին ձեռագիրների թիւը հասնում է 4700-ի։ Մինչեւի մատենագարանը մի միլիոնից աւելի դիրք ունի, Երելինի և Վիեննայի արքայական մատենագարանները նոյնուէս աշխարհիս առաջնակարգ հաստատութիւններից են։ Գերմանիայում խրաբանչիւր համալսարան և իշխանական տուն իւր մատենագարանն ունի, Հաշուելով անթիւ բազարային և մասնաւոր անձանց մատենագարանները Անցեալ տարի գիտնական թիւն էին յայտնում Խաղական պետութեան դէմ, որպէս հաւաքուած է ծախսում մատենագարանների համար։ Վիկոսը կմանուէլի անունով հիմնուած Հուովմի մատենագարանը տարեկան 100000 միրայ էր ծախսում և այդ համար շատ քիչ իտալիայի ամենից նշանաւոր մատենագարանը, բացի վերյիշեալից, Թուրքիայինն է, որ միայն 18000 ձեռագիր ունի, երաժշտութեան վերաբերեալ դրուածքները միայն 23000։

Այս թեթեւ աեղեկութիւնները յայտնում ենք ցայց տալու համար, թէ ի՞նչքան մեծ ուշագրաւթիւն են գարնեամ եւրոպական քաղաքակիրթ ազգերը մատենագարանների պահպանութիւնն և ճիշտութիւն կարգավորութիւնների պահպանութիւնն և արտեսուից թանգարաններին են կարմում և եւրաքանչիւր տարի Գերմանիայում մատենագարաննապեսների ընդհանուր ժաղավէ գումարութեամբ, որ սկզբանքներ են որոշում ընդհանուր խորհրդակցութեամբ մատենագարանները հարըստացներաւ, լաւ պահպանելու և գիտնականներին մատչելի գարնեւուր համար։ Անցեալ տարի Մարտուրգում գումարուեցաւ գերիանական մատենագարաննապեսների ընդհանուր ժաղավը, որին մատնակցում էին 65 հոդի, որպէս ներկացացացիչ այլ և այլ մա-

առնագործների։ Դիտութեան մէջ մատենագործներուն առաջարկադրութիւնը մի մասնաճիւղ է այժմ։ Կոյն իոկ մասնագիտակըն թերթ կոյ այդ նպատակի համար։

Գ.

Սակայն մատենագործների գաղափարը չոր չէ, նորիքքի ստունէտկան ժամանակիներում ևս քաղաքակիրթ ազգերը մհծ ինտերէին տանում մատենագործների կազմութեան և պահպանութեան համար։ Կինու էլ աղիւոէ սեպան արձանագրութիւնների մատենագործները յիշեցնք առաջ, որ բրիտանական թանգարանի զարդն է կազմում այժմ։ Պազոմէռն Սոսերի (+280թ.) հիմնած ճախ մատենագործները յայտնի է ամենքին պատմութիւնից։ Բայց Մատենագործանի գաղափարը շատ էական նշանակութիւն է ունեցնել նաեւ քրիտոնէական եկեղեցու համար։ Եկեղեցական մատենագործների ծագումը կատառած էր քրիտոնէական գիտութեան ծագման հետ անհրաժեշտ էր գարեւէլ քրիտոնէական դիտութիւն մշակել՝ մասամբ գնասաթիվեան փիլիսոփայական շարժումների գէմ մարդուելու և մասամբ հելլենական փիլիսոփայութեամբ կրթուած նորագործ քրիտոնէաներին բաւականութիւն տալու։ Այս կարիքն զգացում է ամենից առաջ Ազեքաննգրիսայում։ և այնուեղի քրիտոնէական գիտական դպրոցը ամենամեծ ազգեցութիւն է ունեցել առաջին մատենագործների ծագման խնդրում։ Առաջին եկեղեցական մատենագործները, որի մասին տեղեկութիւնն ենք ուսանում Եւսեբիոս Կեսարացու պատմութիւնից՝ Երուսաղեմի մատենագործների է, որ հիմնել է Ազեքաննդր Երուսաղեմացին Գ. գարու քսանական թուականներին։ Երկրորդ և աւելի նշանաւոր մատենագործներին Կեսարիայինն էր, որ հիմնել էր Եւսեբիոս Կեսարացու սրտագին բարեկամ Պամիկութիւն երէցը։ Կեսարիայի այս երէցը Գ. գարու ամենանշանաւոր և համակելի քրիտոնէայ անձնաւորութիւններից մէկն է, քրիտոնէական գիտութեան հավանաւոր

և որաշառանու ինքն անձամբ արտապրում էր Օրիգինէսի գրուածքները, Ա. Գրքեր, որնց օրինակները մինչեւ այժմ էլ կան։ Մեր մատենագործների մի քանի ձեռագիրների մէջ կազմութեան կայութիւն կայութիւն է այս կայութիւնների արտագրութիւնից է եզել<sup>\*</sup>։ Պամիկութիսի մատենագործների հիմնական մասը հաւանաբէն կազմում էին Ազեքանանդագործների գաղրոցի նշանաւորագոյն ուսուցչին Օրիգինէսի գրուածքները, որ յետոյ ընդարձակելով նուիրեց Կեսարիայի եկեղեցուն Այս երկու մատենագործներին՝ յատկապէս Կեսարիայի մատենագործներին և պարտական ինչ որ գիտենք քրիտոնէական առաջին երեք գաղրերի մասմբն սոսին եւսեբիու իւր պատմութեան նիւթը բոլորն այս երկու մատենագործներից է քաղել։ Կեսարիայի և Երուսաղեմի օրինակներն են հետեւում և միւս նշանաւոր եպիսկոպոսութիւնները։ Ամենայն հաւանականութեամբ Եկեղեցական հարուստ մատենագործներին կային Ազեքաննդրիտույում և Անտիոքում, ուր ծաղկում էին երկու միմեանց հակառակ ուղղութեան հետեւող գիտնական գաղրոցները։ Եղեսայի գիտնական գաղրոցն ևս ունէր իւր մատենագործները, Հռովմի գիտանի սկզբնաւորութիւնը չորրորդ դարից են հաշւում։ Այսուհետեւ վանականութեան զարգացման հետ՝ բազմանում է և վանական մատենագործների թիւը թէ արևելքում և թէ արևմուտքում։ գիտութեան կեդրոն վանքերն են դառնում իրենց մատենագործներով, ուրոնց մասին երկար ճառելլ մեր խնդրից դուքս է։

\*Օրինակ Հ. 359, 531<sup>թ</sup>. Գրեցի և հարգեցի ըստ կարի Ստիբերովն զգիրս Պաւլոսի առաքելոյ յաւրինեալ գիւրահաս ընթերցուածովք եղանացդ մերց, յորոց յամենեցունց չմեղազրութիւն յանդընութեանս իմց հայցեմ։ Զի աղաւմիւք որ վասն մեր լինիցին, զիջանելն ձեր ըստ իս ընդունիցիմ։ Ընդաւրինական զիրս այս ընդ կեսարացու աւրինակացաւոր որ կամ յարկին դրոց արրոյն Պամիկութիայի ինուլի մեռաւուց դրեալ։

Նոյնը նկատում ենք և Հայոց  
մէջ, որ իւր զարգացման հասնում է  
Ժ. դարից սկսած։ Հաղպատ և Անհաջին,  
Տաթե վանական մատենադարաններ ու-  
նեին Տաթեի գրատանը հիմուեցաւ Թ.  
դարում Սիւնեաց Յովհաննէս Եղիսկապատի  
ձեռքով, բայց հետզհետեւ աւելի ընդարձա-  
կուեցաւ նոյն վանքի վարդապետների գրա-  
ւոր վաստակներով և արտագրութիւններով։  
Օրբելիան օգտուել է յատկապես Տաթեի  
դիւնատան թղթերից, որոնցից մի քանի-  
ուը բառացի ընդօրինակում է իւր պատմու-  
թեան մէջ։ Գրիգոր Տղայի և Տուտէորդու-  
թղթակցութիւնների մէջ յիշում են Հաղ-  
բատ—Անհաջին և Հոյրագետական Աթոռի  
մատենադարանները, Առութիւննց արքայա-  
կան մատենադարանի գոյութեան մասին տե-  
ղեկութիւն ենք ստանում Ալիշանի Ախուա-  
նից (եր. 224): Մեր նպատակը չէ մի առ  
մի թուել Հայոց մատենադարութեան մէջ  
յիշուած մատենադարանները, այսքանն էլ  
բաւական է ընթերցողներին համագետու,  
թէ մատենադարանի զաղափարը Եկեղեցու  
համար կենսական նշանակութիւն ունեցող  
հաստատութիւն է եղել ամենավաղ ժաման-  
ակներից սկսած։

2.

Հայոց վանքերի նախկին մատենագաւառներին այլ ևս դպրութիւն չունին, բարձրարասութիւնն ու ձախորդ հանգամանքները աւերակ դարձրին այն հաստատութիւնները, ուր երբեմն ծաղկում էր ժամանակի դիտութիւնը, ուր անձնուեք վահականները չնայելով ամեն տեսակ նեղութիւններին՝ արտադրում և արածում էին նախնեաց թռագած հոգեոր ժառանգութիւնները։ Սակայն ըոլորտվին անմիտիթար չենք. չյիշելով երկրորդական վանքերի ժողովածուները՝ միքանի կեդրոններ ունինք, ուր հաւաքուած են նախնեաց ձեռագիրների մնացորդները։ Այդ կեդրոնների մէջ առաջին տեղն է բռնում Մայր Աթոռի մատենագաւառնը՝ 3800-ի չափ ձեռագիրներով, եթէ եացիկ վարդապետի ժողովածուն էլ հա-

շուենքը, որ խոստացել է Մայր Աթոռին նուիս  
րել։ Մատենագարանին կից է և հայրապետ  
առաջանական դիմանք, որն այժմ հետզհոտէ կար-  
գի է բերւում և արժանի է առանձին ու-  
շաղբառթեան։ Մեր եկեղեցու պատմութեան  
գլխաւոր ազրիւրը այսուհետեւ դիմանաւոն  
թղթերը պիտի լինին, ուրեմն և նայնչափ  
խնամքով պէտք է պահպանուին, պակաս-  
ներն այլ և այլ դիմաներից արտագրուին,  
ինչպէս երեկոն ձեռ ագիրները։

Մայր Աթոռի մատենադարանը մեր հ-  
զեցու և ժաղովրդի համար մի անգնահատե-  
լի դանձ է, մեր նախնեաց հոգեոր կեանքի  
արմատներն այդ վիճակներով ծակուած ձե-  
սագիրների մեջ են թագնուած, բայց մի-  
միայն ձեռագիրները բաւական չեն դիմուա-  
կան աշխատութիւններ կատարելու համար  
Այդ անգին ժառանգութիւնը շահեցնել  
կարող ենք այն ժամանակ, երբ նացա ու-  
սումնասիրութեան համար անհրաժեշտ օ-  
ժանդակ միջոցներ սնենանք ձեռքի տոկ:  
Տարարպղաբար այս կողմից տղքաս  
է մեր մատենադարանը, վերջին հայրա-  
պեանները որքան ուշագրութիւն են դարձ-  
րել ձեռագիրների և դիմուական ճախու-  
թեան վերայ, նոյնքան անփոյթ են եղել  
տպագրուած գրքեր ժազմելու վերաբերու-  
թեամբ: Աակայս այդ անփութութիւնը՝ ա-  
նուսութեասիրութեան հետեանք չէր, այլ այն  
թիւրիմացութեան, թէ ձեմարանի մատե-  
նադարանը բաւական է իմիածնի համար,  
մանաւանդ շատ ուղ են Մայր Աթոռի մի-  
ջոցները: Գեղորդ Դ. մեծագործ կաթուզի-  
կոսը, օրինակ, որ մեր մատենադարանը  
ճոխացրել է ձեռագիրներով, ձեմարանի  
հիմնարկութիւնից յետոյ անուշագրութեան է  
մասնել տպագրուած գրքերի մատենագա-  
ռանը: Այնուհետեւ վանական մատենագա-  
ռանի միակ եկամուտը հանգուցեալ մարտի-  
ների գրքերն են եղել և վերջերս ցանցա-  
կերպով ստացուած ընծաները, Խոսմը և  
շագրութիւն վացելի է միմիայն ձեմա-  
ռանի մատենադարաննը, որին գրքերի թիւն  
ոյժմ 18000-ից աւելի է, այն ինչ վանա-  
կան մատենադարաննինը 3000-ից չե անց-  
ում: Աակայս չնոյելով թուի սակաւութեան

վանական մատենագարանն այն առաւելութիւնն ունի, որ նորա դրբերը բացառապէս հայրապետական են և շատերը հազուագիւա, հին, թանկագին տպագրութիւններ:

Դէսի վանական մատենագարանը ցայց տուած այդպիսի անուշադրութիւնը մի սխալ էր, որ այժմ ուղղել է կամենուած ներկայ Ա. Հայրապետը Որբան և կարեսը էր ձեմարանի մատենագարանի գոյութիւնը, չպէտք է զարգանար ի մասս վանական մատենագարանի: Երկու մատենագարանները կարող են իրար լրացնել, բայց ոչ երբէք իրար տեղ բռնել. մէկը զպրցական մատենագարան է, իսկ միւսը պէտք է ազգային, կեղրնական—հայրապետական մատենագարան լինէր: Չեռագրատան հետ անհրաժեշտ էր ունենալ տպագրուած դրբերի մի այնպիսի ժողովածու, որ զոհացում տար հայրապետական թեամբ զբաղուող օտար և հայ բանակներին: Ուրիշ ոչ մի տեղ հնարաւորութիւն չկայ, և ուրիշ ոչ մի տեղ սրաւշան չէ հայրապետական, կեղրնական մատենագարան ունենալ, բայց եթէ Մայր Աթոռուած, ուր զանոււմ է հայ ձեռագիրների ամենամեծ ժողովածուն: Հոգեոր Տէրը, որ Վարագայ վանահայրութեան օրերից ազգային հնութեանց ժողովով է եղել նոր հիմնած թանգարանի հետ՝ հաճելէ իւր Հայրապետական բարձր ուշադրութիւնը դարձնելնաև վանական մատենագարանի վերայ: Այս տարուանից ն. Արքութեան հրամանով վանական ծախսերի նախահաշուի մէջ 200 ր. է նշանակուած մատենագարանի համար միմայն դրբեր զնելու նորատակով (միւս ծախսերի համար վանական կառավարութիւնը պիտի հոգայ): Բայց սորանից ընթերցարանի և Աթարաւուի խմբագրութեան համար պարբերական թերթեր ըերելու համար նշանակուած է 150 ր., որ տարուայ վերջում՝ դարձեալ վանական մատենագարանին պիտի յատկացուի: Այսպիսով տարեկան 350 ր. է նշանակուած մատենագարանը ճոխացնելու համար, որ մի չնչին գումար է, թէև իրեն ուղրնաւորութիւն շատ ուրախալի:

Դարձեալ Ա. Հայրապետի ցանկութեան համեմատ էր, որ պ. Աւետիք Գուկասեանը

բաւական մեծ նուիրաբերութիւն արաւ Պօլուում մի անձնաւորութեան մօտ եղած պարբերական թերթերի ժողովածուն զներու, որ վազուց ստացուածէ Մայր Աթոռում:

## Ե.

Հոգեոր Տիրով կարգադրութեամբ մեր վանական մատենագարանի համար մի նոր ցընան է սկսում: բայց նորա բարի ցանկութիւններն էլ անկատար կմնան, և թէ մեր բանիմաց հասարակութիւնը աջակցութիւն ցայց չայց Հայրապետական Աթոռի հոգանու ներքոյ գիտնական, լիակատար մատենագարան կազմելու խնդրին: Այդ պատճառով հարկ ենք համարում մի քանի խօսքով ծրագրել հայրապետական Աթոռի մատենագարանի սահմանը, որպէս զի հասարակութեան համար էլ պարզ լինի, թէ ինչ բանի համար նորա աջակցութեանն ենք գիտմում: Եւրոպական մարզով, ինչպէս արքայական մատենագարաններն են, ուր հաւաքուած յինին գիտութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ աշխատաւութիւնները, մատենագարան կազմել անկարող ենք: Պէտք է սահմանափակենք մեր մատենագարանի կոչումն այն չափով, որբան անհրաժեշտ է մեր եկեղեցու և ժողովրդի համար: Մայր Աթոռի կոչումը հոգեոր է, այդ պատճառով էլ նորա հոգանու տակ հաստատուած մատենագարանի կերպունական նորա պիտի լինի նախ եկեղեցու հոգեոր—քաղաքակրթական կեանքի յայտարարը լինել իւր մէջ ըստ հանուր քըսատանէական եկեղեցու համար նշանակութիւն ունեցող գրական երևայթները—Ա. Գիրքը և նորա մատենագրութիւնը, եկեղեցական հայրերի գրուածքները, ժողովների կանոններ և գործեր, որ մեր եկեղեցական անցեալ կեանքի դարգացման ուղղութիւն են տուել: Ապա նախնեաց մատենագրութիւնը, արուեստը և նոցա մասին կատարուած ուսումնասիրութիւնները հայ կամ օտար լեզուներով:

Հայերն իրեն քրիստոնեայ ազգ քա-

զաքակրթական փոխադարձ յարարերութիւն են ունեցել Ասորէների, Բիւզանդացիների և Վրացիների հետ. մասաւանդ Հայոց և Բիւզանդացիների շփոմը այնքան սերտ էր, որ Հայոց մատենագրութիւնը և ընդհանրապէս քաղաքակրթական կեանքը ընթանում էր այն զարկերի համեմատ, որ արեմուռքից էր դաշիս Քրիստոնէական շրջանի հայագիտութիւնը որոշ չափով կարելի է բիւզանդական գիտութիւնների ծիւղ համարել, ոյն իսկ բիւզանդական մատենագրութեան մէջ ցրուած տեղեկութիւնները Հայոց մասն քիչ չեն: Ուրեմն մեր վանական մատենագրանի մէջ սիրով պիտի հիւրինկալուին այն գրքերը, որ վերոյիշեալ ազգերի յարաբերութեան համար աղբիւր են կամ ուսումնասիրութիւն, կամ որ և է կերպով առնչութիւն ունին: Աչ քրիստոնեայ աղբերից Հայերի հետ գարերով յարաբերութիւն են ունեցել Պարսիկները, Սրբների ու Տաճիկները, քաղաքակրթապէս ևս իրենց լաւ և վաս ազգեցութիւնը թողնելով Հայոց հոգենոր հեանքի վերայ. այս յարաբերութեան վերաբերեալ աղբիւրներն ու ուսումնասիրութիւնները նոյնպէս Մայր Աթոռի մատենագրանի մաս պիտի կազմեն: Ներկայ ժամանակը լիտակուար սրբութերացները համար՝ պիտի հաւաքուին եւ ըստուկան և հայ լեզուներով հրատարակուած բոլոր գըրքերը, որ առընչութիւն ունին մեր հեանքի և երկի հետ: Այս սահմանից դուրս չեն ոտար լեզուներից կատարուած հայ թարգմանութիւնները կամ ընդհանրապես կամ ունեցել առնելիութեան մատենագրան: Առողջեւութարգմանութիւններով ամենից հեշտ է ուրշել երկու աղբի քաղաքակրթական փոխադարձ աղբեցութիւնը, Վերջապէս այս բոլորի վերայ պէտք է աւելացնել հանրագիտական մի քանի բառարաններ և դրեր, որ անխտիր պէտք են դալիս ամեն մատենագրանում: Ահա մի քանի խօսքով այն ծրագիրը, որպէս պէտք է առաջնորդուել Մայր Աթոռում կեդրունական հայագիտական մատենագրան կազմելու ժամանուկ:

Զ.

Այսպէս պէտք է չափաւորենք մեր մա-

տենագարանի կոչումը, եթէ դրական նպատակի համանել ենք կամ ենում: Ճեծ փառք և ոգատիւ կլինի Մայր Աթոռի և մեր ժողովրդի համար, եթէ մի քանի տարուց յետոյ հնարաւորութիւն ունենանք հայագիտութեամբ զբաղութիւնը հայ և օտար բանակերպների թիւլու եւ այդ շատ կարեւոր է, և կեղեցու բարոյական յառաջադիմութիւնը պահանջում է ոչ միայն վարչական, անտեսագիտ, այլ և գիտնական գոնականներ ունենալու Եկեղեցու կոչումը հոդեոր է, իսկ գիտութիւնը հոգեւոր կեանք: Քիչնէն է: Ճշմարիտ է, մատենագրանի համար նշանակուած դումարը շատ չնշին է, ապագայում Մայր Աթոռը լուսարաստ կլինի աւելի զոհողութիւններ անել, եթէ հանգամանկները ներին, բայց անիրագրծելի չեն, եթէ պակաս լրացնելու սրարտաւորութիւնը բանիւմ այս կարող հասարակութիւնը յանձն առնէ կատարելու: Մինչև այժմ հասարակութեան աջակցութիւնը տարաբազզարար շատ թոյլ է եղել այս գործի մէջ: Զհաշուենք որ, Կուկասեանի խոշոր նույները, որի մասին յիշեցնք վերև, չհաշուենք նաև Հրատարակչական ընկերութիւնը, որ ամեն տարի իւր տարած գրքերից մի մի օրինակ ուղարկում էր մեր մատենագրանին, շատ հաղուագիւտ են փարք իշատէ կարեւոր գրքեր նույնուշները:

Սակայն լումաներով ևս կարելի է գնաւհատել գործեր կատարել, եթէ հետևողական և անըդհատ կերպով համանեն այդ լումանները: Մենք կկամ ենայինք մեր բոլոր հրատարակիչների, բանասէրների, հեղինակների և թարգմանիչների համար օրինակ լինէր այն բարի սովորութիւնը, որ մի քանի հայ և օտար բանասէրներ յոյց են տալիս գէպի մեր մատենագրանի, անընդհատ ուղարկելով իրենց բոլոր հեղինակութիւններն ու թարգմանութիւնները: Այդպիսով հնարաւորութիւն կունենայինք մեր ձեռքի տակ լեզած փոքր դումարը եւրոպական լեզուներ

բով հաստարակուած հայագիտական աշխատասիրութիւնների համար գործադրելու թողմերը այս առաջարկութիւնը օտագոտիք չերեայ ընթերցողների համար։ Ամենահարուստ մատենագարաններն իսկ իրենց գրքերի մեծ մասը նույն են ստունութ։ Մենք յիշենք միայն մի գէպք, որ կցանկայինք օրինակ լիներ և հայ հասարակութեան հոմարը Թրոնեկ—պրուսական պատերազմի ժամանակ, երբ կործանուեցաւ Սորբասուրդի մատենագարանը, ուսուցչապետ և մատենագարանապետ Բարակը մի հրաւեր ուղղեց գերմանական ժողովրդին՝ նույներով ծածկելու այդ մեծ կորուսաբը։ Նորա հրաւերը արձագանք գտաւ բանիմաց հասարակութեան մէջ. հաստարակիցներ, հեղինակներ, հաստատութիւններ և մասնաւոր անձինք այնքան գրքեր ուղարկեցին, որ կարծ ժամանակի մէջ կարելի եղաւ օրինաւոր մատենագարան կազմել։

Մայր Աթոռում կեղրանական մատենագրաբան կազմելու գաղափարը նոր չէ. միքանի ասրի առաջ հայ լրագրութեան էջերում հարց էր ծագած այդ մասին, յոյսունինք որ այժմ աւելի եռանդով կաջակցէ նա այս գաղափարի իրավորձման:

## Ապասենք և յուսանք:

## 9. Վ. Յովանիսյան.

ՄԱՅՐ ԱԹՈՂ

Դեկտ. 27-ին անսպասելի կրթառով լուր  
տարածուեցաւ ձեմարանում, ԲՇ, Հոգեոր  
Տէքը իւր օր համարեր այցելութեամբ կամենում  
է պատուել ձեմարանը և Խոր ճանապարհոր  
դութիւնից տաաջ հայրական խրանիք տալ  
ձեմարանի սաներին: Տօների պատճառով զա-  
ղարած էին դասախոսութիւնները և ուսու-  
ցիչներ չկային ձեմարանում բացի վարչու-  
թեան անգամներից: Սակայն մի քանի ըստէ-  
ում Վեհէի այցելութեան լուրն ստանալուն  
ա' եմարան հաւաքուեցան վարդապետ և

ապա աշխարհական ու սույներից մի քանիք և Հոգեոր Տիրոջը չ. Տեսի հետ Հանդիսարան առաջնորդեցին, ու ի հաւաքուել էին աշակերաները: Հոգեոր Տիրը համեց աշակերաներին այլ և այլ խրանինք ասել, յիշեցնելով Փրկչի ծննդեան տօնի մերձաւորութիւնը: Երբեմ ականանես Պատկեսախնի սուրբ Գայլերին և բուսպղեմի Ա. Յակոբեանց միարանութեան ծննդեան տօնի հետ կապուած սովորութիւնների մասին տեղեկութիւններ յայտնեց: Ի վերջոյ օր Հնեց ուսուցական խումբն ու աշակերանութիւնը յայտնելով որ Խը Հայրական խնամքը ձեմարանից անպակաս պիտի անէ, նոյն իսկ Խը բացակայութեան ժամանակ: Ապա հանդիսարանից զուրս դարձ համեց և Արքութիւնը մի քանի բռպէ: Հանդսանապ հ. Տեսի սեւեակում ուր հաւաքուած էր և ներկայ ուսուցիչների խումբը: Երգիները Ա. Հայրապետի անուանն նույնուած և ժաղովրդական երգեր էին երգում զուրս:

Ա. ՎԵՀԻ ՀԱՆԱՊԱՐՀՈՒԹԻՒՆԸ.

Դեկտ. 28-ին Հոգեոր Տէրը Մայր Աթոռուից Երևան զնաց այնակղից Սեան, Ալեքսանդրապոլ և ապա կարեոր զործերի պատճեռով Տիֆիխո ու զենոռուելու համար: Հոգեոր Տիբոջ մինչև կառք նասելն առաջնորդեց աշբողջ միարանութիւնը, իսկ ձեմարանի գարրասի առաջ փողցի երկարութեամբ շարուած էին ձեմարանի աշակերաներն իրենց վերակացուներով, ներկայ ուսուցիչներով տեսչի հօգնականի հետ: Ն. Մըրութեան մինչև Երևան ճանապարհ զրին Գարեգին Սաթօւնեան Աշոտ, Կարապետ, Եղնիկ և Գ. Յովելիկեան մարդապետները:

—Ասպա՞ն. Սըրբութիւնը 29-ին Խըւանից  
դուրս գալով՝ զիշերել է Սուխոյ — Ֆանտանում  
և միւս օրը Ելինովիս Հաճել. Աւանի միաբանու-  
թիւնն այստեղ ընդառջել է իւր Հոգեորդիրոջ  
և յաջող նաւարկութեամբ կղզին առաջնորդել։  
Տարեմայն ն. Սըրբութիւնն Հաճել է անցնել  
Աւանում, միաբանութեան հետ։ Այստեղ  
երկու օր Հանդասանալուց յետոյ ն. Վե-  
հութիւնը յունուարի 3-ին շարունակել է  
իւր ճանապարհը և 4-ին առաւատեան